

ք. Սևան

15.07.2021թ.

Սույն թվականի հուլիսի 15-ին՝ ժամը 12.00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ Միշա Ստեփանյանին պատկանող, ք. Սևան, թերակղզու տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարման օդային գծի անցկացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում (երկրորդ փուլ)՝ մասնակցությամբ «ՀԷՑ» ՓԲԸ գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանի, «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետ Արմինե Վարդանյանի, «Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայանի, բնապահպան Արամ Գալոյանի, Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանի, աշխատակազմի ճարտարապետա-շինարարական բաժնի առաջատար մասնագետ Սամվել Թադևոսյանի, Սևան համայնքի ավագանու անդամ Արթուր Մելքոնյանի:

Հանրային քննարկումը վարեց Արմենուհի Ղուկասյանը:

Նա հայտնեց, որ 1-ին հանրային քննարկումը տեղի ունեցել դեռևս 2020թ. սեպտեմբեր ամսին, 2-րդ հանրային քննարկումը հրավիրվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ստացված գրության հիման վրա:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետ Արմինե Վարդանյանի ներկայացմամբ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված «Սևան քաղաքում (թերակղզու տարածք)՝ Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարում»-ը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ենթակա չէ փորձաքննության, սակայն գործունեությունն իրականացվելու է հատուկ պահպանվող տարածքում՝ «Սևան» ազգային պարկի տարածքում, այդ իսկ պատճառով նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, 8-րդ մասի դասակարգվում է Բ կատեգորիայի:

Այսօր կայանում է 2-րդ հանրային քննարկումը, օրենքով սահմանված կարգով կազմվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որտեղ ներկայացված են այն պահանջները, ինչի հիման վրա պետք է կազմվի գնահատման հաշվետվությունը և ներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Անհրաժեշտ է Շրջակա միջավայրի վրա գնահատման իրականացման գործընթացում դիտարկել Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերը: Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և փորձաքննության ներկայացվող կից փաստաթղթերը պետք է համապատասխանեն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերին:

Նախնական գնահատման հայտը կազմվել է օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, փորձաքննության ընթացքում հայտն ուղարկվել է տարբեր գերատեսչություններ և շրջակա միջավայրի նախարարություն կարծիքներ ստանալու համար: Եղել են առաջարկություններ և դիտողություններ որոնց հիման վրա հայտը լրամշակվել է, ուղարկվել է ՀՀ ԳԱԱ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողով, ստացվել է դրական կարծիք:

Համաձայն հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 28 օր, ազդեցությունները շրջակա միջավայրի վրա լինելու են ժամանակավոր՝ կապված հողային աշխատանքների, տեխնիկայի աշխատանքի հետ: Ազդեցությունները մեղմելու համար հայտում ներկայացված են միջոցառումներ, որոնք ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում:

«ՀԷՑ» ՓԲԸ գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանը հայտնեց, որ 2 հենասյուն տեղադրելու մասով չի կարող լինել մեծ ազդեցություն, քանի որ ծավալուն շինարարական աշխատանքներ նախատեսված չեն. պետք է կատարվի լիցք, և սյուները տեղադրվեն: Միաժամանակ նշեց, որ էլեկտրամատակարարումը հասնելու է մինչև տարածք, ինչպես նշված է նախագծային աշխատանքներում: Միշա Ստեփանյանը բաժանորդ է, և ընկերությունն իրականացնելու է իր հասանելիք աշխատանքը: Սա «Բ» կատեգորիայի գործունեություն է, իրականացվում է հատուկ պահպանվող տարածքում, ուստի հրավիրվում են հանրային քննարկումներ: Հիդրոլոգիական ազդեցության մասին որևէ հարց լինել չի կարող:

«Սևան» ԱՊ-ի ճարտարագետ Կարեն Բաբայանը նշեց, որ ազգային պարկի ներկայացուցիչները դեռևս 1-ին քննարկման ժամանակ արել են իրենց դիտողությունները և դրանք հաշվի են առնվել:

Հանրային քննարկման ընթացքում նշվեց նաև այն հանգամանքը, որ եթե լինեն արտակարգ իրավիճակներ ջրի բարձրությամբ պայմանավորված, ապա հենասյուները կտեղափոխվեն տարածքի սեփականատիրոջ միջոցներով:

Գործընթացի հետագա կազմակերպման և ընթացքի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չեն արձանագրվել:

Հանրային քննարկման մասնակիցների կողմից տրվեց հավանություն լրամշակված նախագծային փաստաթղթերին:

Նախաձեռնող՝

«ՀԷՑ» ՓԲԸ ներկայացուցիչ Դ. Գրիգորյան

Նիստը վարող և քննարկումների պատասխանատու՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Ա. Ղուկասյան

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Ղուկասյան